# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
## № ՀՄԱՊՁԲ-26-4/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

14.05.2026թ.

ք. Երևան

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՄԳ-47» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն՝ Ս. Մարտիրոսյան, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 05.03.2026թ. կնքված № ՀՄԱՊՁԲ-26-4/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 34 356 000 (երեսունչորս միլիոն երեք հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

### 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՄԳ-47» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ.ք. Երևան, Գաջեգործների 30 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 2050022432071001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00410028 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ |

Հավելված N 1
N ՀՄԱՊՁԲ-26-4/3-1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/Հ | Անվանումը | Չ/Մ | Քանակ | Միավորի գին (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումար (ՀՀ դրամ) | Մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2026թ., համաձայնագիր կնքելուց հետո՝ ոչ ուշ քան՝ 20.05.2026թ.: |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | զրահաբաճկոն (ավտոմատավորի զրահաբաճկոն՝ բեռնաթափող գոտիով, Բր 2 մակարդակի պաշտպանության ճկուն բալիստիկ ներդիրով) | հատ | 120 | 286 300 | 34 356 000 | |

Հավելված N 2
N ՀՄԱՊՁԲ-26-4/3-1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ., ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 25.12.2026թ. | | |
|---|---|---|---|---|---|
| Հ/հ | անվանումը | CPV կոդը | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | զրահաբաճկոն (ավտոմատավորի զրահաբաճկոն՝ բեռնաթափող գոտիով, Բր 2 մակարդակի պաշտպանության ճկուն բալիստիկ ներդիրով) | 35811290/501 | 34 356 000 | 34 356 000 | 34 356 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

---

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԳ-47» ՍՊԸ
տնօրեն

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

---